ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ Ռ. Մարտիրոսյան

Կոտայքի տարածաշրջանային

պետական քոլեջի կառավարման

խորհրդի նախագահ

20.08 2020թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

ԱՌԱՐԿԱՆԵՐԻ (ՄՈԴՈՒԼՆԵՐԻ)

ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՎԵՐԱՆԱՅՄԱՆ,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ

Քննարկվել և հավանության է արժանացել

ԿՏՊՔ-ի ուսումնամեթոդական խորհրդի կողմից

«18» օգոստոսի 2020թ.

ՀՐԱԶԴԱՆ 2020

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.Առարկայի (մոդուլի) ուսումնական ծրագիրը հիմնական կրթական ծրագրի պարտադիր մասն է և դասավանդվող առարկայի (մոդուլի) նյութը, ուսումնական պարապմունքների տեսակները և ժամային բաշխվածությունը կանոնակարգող հիմնական ուսումնամեթոդական փաստաթուղթը:

1.2.ԿՏՊՔ-ում մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնական պլաններում ներառված բոլոր առարկաների (մոդուլների) մշակման, վերանայման, հաստատման գործընթացն իրականացվում է համաձայն սույն կանոնակարգի:

1.3.Սույն կանոնակարգում փոփոխություններն ու լրացումները հաստատվում են նույն կարգով:

1.4.Առարկայի (մոդուլի) ծրագիրը վերանայելու, մշակելու, գնահատելու և հաստատելու համար հիմք են ընդունվում լիազոր մարմինների (ԿԳՆ) որոշումները, հրամանները, գրությունները:

1.5.Քոլեջի դասխոսական կազմի և ամբիոնների համար ուսումնական ծրագրի առկայությունը պարտադիր է տվյալ առարկայի (մոդուլի) ուսումնառությունը կազմակերպելու համար:

1.6.Ծրագրի մեկ օրինակը պահվում է ամբիոնում, երկրորդը՝ ուսումնական մասում:

2.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

2.1.Նոր առարկայի (մոդուլի) ծրագրերը կազմելու համար նախաձեռնող կողմերն են՝

ա.ամբիոնը

բ.տվյալ դասընթացը պարապող դասախոսները

գ.ուսումնամեթոդական խորհուրդը:

2.2.Ուսումնական ծրագիրը կազմվում է առարկան (մոդուլը) դասավանդող մասնագետների կողմից:

2.3. Ծրագրերը կազմելիս ամբիոնի դասախոսները պետք է առաջնորդվեն պետական կրթական չափորոշիչներով, տվյալ մասնագիտության ուսումնական պլանով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գրություններով և սույն կարգի դրույթներով:

2.4.Ծրագրերի համապատասխանությունը ՊԿՉ-ին և ուսումնական պլանին վերահսկվում է ամբիոնի վարիչի կողմից: Ստուգման արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստում:

2.5.Ծրագիրը համարվում է ընդունված, եթե այն համապատասխանում է պետական կրթական չափորոշիչների պահանջներին, ուսումնական պլաններին և սույն կանոնակարգի դրույթներին:

2.6.Ամբիոնի նիստում հավանության արժանացած ուսումնական ծրագիրն ուղարկվում է ուսումնամեթոդական խորհուրդ՝ քննարկման և կառավարման խորհուրդ՝ հաստատման:

2.7. Պարբերաբար իրականացվում է ծրագրերի արդյունավետության գնահատում մասնագետների կողմից: Գնահատման արդյունքները ներկայացվում են ամբիոնների և ուսումնամեթոդական խորհրդի նիստերի քննարկմանը:

2.8. Եթե տվյալ առարկայի համար առկա է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համապատասխան բաժնի կողմից կազմված և երաշխավորված ծրագիր, ապա դասախոսն իրավունք ունի օգտագործելու այն և նոր ծրագրի կազմումը պարտադիր չէ:

2.9.Ծրագիրը կազմելիս հաշվի են առնվում աշխատաշուկայի առանձնահատկությունները (ընտրովի առարկա, պահուստային ժամեր):

3.ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3.1.Առարկայական ուսումնական ծրագրի կառուցվածքը ներառում է առարկայի նպատակը, խնդիրները և բովանդակությունը, որը պետք է համապատասխանի մասնագիտությունների ուսումնական պլաններին և պետական կրթական չափորոշիչներին:

3.2. Դասընթացի (մոդուլի) ծրագրերը կազմելիս ՄՈՒՀ-ն առաջնորդվում է ՊԿՉ-ներով, որոնք փոփոխության ենթակա չեն: Մոդուլային ծրագրերը մշակելիս անհրաժեշտության դեպքում հնարավոր է կատարել ժամային և բովանդակային փոփոխություններ :

3.3.Հանրակրթական առարկաների ծրագրերի մշակումն իրականացվում է ավագ դպրոցների ծրագրերի հիման վրա:

3.4.Ընտրովի առարկաների ծրագրերը մշակելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ տվյալ առարկան պետք է նպաստի ուսանողների հմտությունների և կարողությունների զարգացմանը:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրենի պարտականությունները

կատարող՝ Վ. Թովմասյան